AMPERA
CONSULTING & PROJECT MANAGEMENT

ՀՀ, Երևան 0009, Վերին Անտառային 135, բն. 3
+374 11 20-50-60 I +374 91 42-54-33
info@ampera.am
www.ampera.am

Երևան / 01.09.2026

**ԼՈՌՈՒ մարզպետ**
**պարոն ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Մկրտչյան,

Մեկնարկել է **«Հայաստանի Հանրապետության սպանդանոցային համակարգի համապարփակ ուսումնասիրության և վերլուծության իրականացում» ծրագիրը**՝ համաձայն **«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի** կողմից նախապես մշակված և **ՀՀ Էկոնոմիկայի նախարարության** կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի:

Ուսումնասիրության նպատակն է գնահատել Հայաստանի Հանրապետության սպանդանոցային համակարգի ներկա վիճակը, բացահայտել սպանդանոցների թերբեռնվածությամբ գործելու կամ չգործելու հիմնական պատճառները, ինչպես նաև վերլուծել դրանց արդյունավետ գործունեությանը խոչընդոտող իրավական, ինստիտուցիոնալ, տնտեսական, ֆինանսական, տեխնիկական և սոցիալական գործոնները:

Ուսումնասիրության շրջանակում նախատեսվում է մշակել հիմնավորված, գործնական և իրագործելի առաջարկություններ՝ ուղղված սպանդանոցային համակարգի արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ պետական աջակցության, խրախուսման, կարգավորման և վերահսկողության արդյունավետ մեխանիզմների ձևավորմանն ու կատարելագործմանը:

Ուսումնասիրության անցկացման նպատակով խնդրում ենք տրամադրել **ԼՈՌՈՒ մարզում** հիմնված **բոլոր (գործող և չգործող) սպանդանոցների անվանացանկը**՝ կից ներկայացված աղյուսակի տեսքով:

Շնորհակալ ենք:

Հարգանքով,

**ՎԱՀԵ ՄԱՄԲՐԵՅԱՆ**
**Տնօրեն**

Կատարող՝

**Լիլիթ Սարգսյան**
Ուսումնասիրության համակարգող
(091) 332-007

Digitally signed by ՎԱՐԴԱՆ ԱՂԲԱԼՅԱՆ
3710740240
2026-09-01 14:50:16 GMT+04:00

**ԱՂՅՈՒՍԱԿ**

*ԼՈՌՈՒ մարզում առկա սպանդանոցների անվանացանկ*

| No | Սպանդանոցի անվանումը | Գրանցման ամսաթիվ | Կարգավիճակ* | Հասցեն | Հեռախոս | Սպանդանոցային գործունեության տեսակը (նշել ✓) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Ծառայություն մատուցող | Ներտնտե-սային | Սպանդանո-ցային կետ | Շարժական |
| 1 | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | |
| … | | | | | | | | | |
| | | | | | | | | | |

* - Կարգավիճակի օրինակները.

1. Գործունեությունը թույլատրված է և գործում է
2. Գործունեությունը թույլատրված է, բայց չի գործում
3. Գործունեությունը թույլատրված չէ